

ԻՄԵՐԱՆԵՐ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՆԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՐԵՆ, ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՎԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիսիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Առատահմանի համար (երկու քիւր մեկ ծառայ) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Ամերիկայի » 2.60 տղ. վեցամս 1.50
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՆՈՒՆԵՐ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍՌԱ (Պուլկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
„Правункъ“
ВАРНА (България)

Rédaction du journal
„Iraounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնի
ես չեն դրկուիր եւ յարմար դատարան-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Մանուցման տղր 20 սանթիմ. երե-
սին աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի:

ՌՈՒՍԻՈՑ ՊԱՅԱՆՁԸ

Վերջին ռուս-թրքական պա-
տերազմին թուրքիոյ յաղթուե-
լուն հետեւանքը եղող Պերլինի
դաշնագրին 61րդ- յօդուածը Սուլ-
թան Համիտի կառավարութեան
սա մտահոգութիւնը ներշնչեց թէ՛
մօտ տարիներու ընթացքին մէջ
Միտաթուի հայկական նահանգնե-
րն եւս կորսնցնելու դատապար-
տուած է, եթէ այդ տեղերուն մէջ
հայ տարրը չարունակէ իսլամ բը-
նակութեան վրայ իր դերակշիռ
դերը ունենալ: Երկրորդ ինքզին-
քը այդ վտանգէն ազատելու հա-
մար միակ միջոց ընտրեց հայ
տարրին Հայաստանէ հեռացումը
կամ ջնջումը: մանաւանդ երբ մէկ
կողմէ բացօթեց կը տեսնէր արտա-
սահմանէն ու Պոլսէն Հայերուն
դէպի Հայաստան փութացուցած
նպաստները, Պոլսոյ մէջ ալ եւ
ալ հայկական ընկերութեանց կազ-
մակերպութիւնները, Հայաստանի
մէջ Հայը մտաւորապէս դարգա-
ցնելու նպատակաւ: Նաեւ Ներսէս
պատրիարքի ազգ. ժողովոյ մէջ
ու հիւնդեցեաց բեմերէն ըրած
յորդորները ու հրաւերները թէ՛
հայ վաճառականը, դրամատէրը,
գիտունը, արհեստաւորն ու մշակը
երթան հաւաքուին ի Հայաստան,
հոն զարգանան ու զարգացնեն եւ
պատրաստ դանուին մօտաւոր ա-
պագայի մը մէջ հաստատուելիք
եթէ ոչ հայկական իշխանութեան
մը, գոնէ ինքնավար վարչութեան
մը բոլոր ղեկերը ձեռք անցնելու:
Հայերուն այս ձգտումը Դրան
ու երկրորդ մտահոգութիւնը ան-
բացատրելի սարսափի վերածեց:
Ասիական մի քանի նահանգներու
ինքնավարութիւն տալու գաղա-
փարը Սուլթանի ուղեղին մէջ չէր
սղմեր բնաւ, ատով կը կարծէր
թէ իր վերջին կռուանք վտանգի
ենթարկած կըլլայ: Ուստի այդ
վտանգէն ազատելու համար հայե-
րը կոտորելու ամենայնաւոր ծրա-
գիրը ընտրեց եւ անոր գործադրու-
թեան համար յարմար առիթն ալ
գտաւ, 1894-1897 թուականին,
երբ ռուս քաղաքականութիւնը կը

վարէր Լոպանով, որ իրեն սկզբ-
բունք ունէր «Հայաստանի տիրել
առանց հայու»: հետեւաբար Լո-
պանովի եւ Սուլթանի կարծիքնե-
րը համաձայն էին հայոց ջնջումին
տեսակետով: Այս ջնջման գործով
Սուլթանը ինք թուրքիոյ ամե-
նամեծ հարուածը կուտար թէ՛ բա-
րոյապէս եւ թէ ներթապէս: մէկ
կողմէն, քաղաքակիրթ աշխարհի
նողկանաց առարկայ կըլլար, իսկ
միւս կողմէն երկրին տնտեսական
անկումը կը փութացնէր ու իր
հպատակաց մեծ մէկ տարրը հոգւով
չափ թշնամի կընէր իրեն: Սուլ-
թանի վարչութիւնը այս բանը
չէր կարող ըմբռնել ու չըմբռնեց
մինչեւ այս վերջին շաբաթները:
Բայց այսօր որոշապէս կը տես-
նէ թէ Ասիական նահանգներուն
իր ձեռքէն երթալու վտանգը բը-
նաւ չէ մեղմացած, ալ ընդհա-
կառակը աւելի կը շեշտուի, թէեւ
տարբեր ձեւի մը տակ, բայց
կարճ ժամանակի մը մէջ օտար
պետութեանց անցնելու որոշ ե-
րեւոյթներով:

Հայաստանի շարժերուն աչք գո-
ցող Լոպանովի յաջորդը, Կոմս
Սուրաբիէվ, այսօր Պոլսոյ գես-
պան Զինովիէվի բերանով վճռա-
պէս կը պահանջէ որ Միտաթուի
Հիւսիսային բոլոր նահանգներու
մէջ երկաթուղիներ չիւնելու ան-
պայման մենաշնորհը Ռուսիոյ տը-
րուի: Ռուսիոյ այս պահանջէն
մօտ ապագայի մէջ ծագելիք մե-
ծամեծ վտանգները Սուլթանը այ-
սօր զգացած կերեւայ: Նախարա-
րական արտակարգ նիստեր տեղի
կունենան Երկրորդի մէջ: Ռուս
դեսպանը կը պնդէ իր պահանջին
վրայ: Սուլթանը այդ պահանջը
մեղմացնող պայմաններ կ'առաջար-
կէ եւ վերջապէս Բեթեքսպուրկի եւ
Պոլսոյ միջեւ հապճեպ հեռագիր-
ներ կը փոխանակուին: Այս ամե-
նի արդիւնքը պիտի ըլլայ, ինչ-
պէս կերեւայ, Ռուսիոյ ոտնձգու-
թիւնը Հայաստանի բոլոր նահան-
գաց մէջ: արդէն կարսէն կարին
երկարելիք ռուսական երկաթու-
ղին կովկասը Հայաստանի մայրա-
քաղաքին հետ պիտի կապէ: իսկ
նոր մենաշնորհները, որ կը պա-
հանջուին, երկաթեայ ցանցով մը
ամբողջ Մեծ Հայքը շղթայուած
Ռուսաց շահագործման եւ վերջոյ
տիրապետութեան պիտի ենթար-
կեն:

Հայկական խնդրոյն հանդէպ
Սուլթանի տեսակետները պաշտ-
պանող Վիլհելմը իր այդ ծառա-
յութեան իր փոխարինութիւն երբ
Պաղատտի գիծին մենաշնորհը կըս
տանար, բնական էր որ Ռուսիա
աւելի մեծ պահանջ մ'ընէր Սուլ-
թանէն ի փոխարինութիւն իւր այն
ջանքերուն, որով 1894էն ի վեր
չեղողացուցած է Միջինոյ Հայոց
ցոյց առած նպաստաւոր տրամադ-
րութիւնները: Եթէ ասկէ առաջ
Սուլթանը կը մտածէր թէ՛ հայա-
բնակ վեց նահանգներուն համար
երեք պետութեանց կողմէ գծուած
Մայիս 11ի բարենորոգութեանց
ծրագիրը ապակեդրոնացման գրու-
թեամբ Դրան ազդեցութիւնը կը
նուազեցնէր, այսօր կը տեսնէ թէ
ամբողջ Միտաթուի գծերով եւ մե-
նաշնորհներով օտար պետութեանց
շահագործման ենթարկելու կ'ստիպ-
ուի, որոնց հետեւանքը Հայոց պա-
հանջէն անբաղդատելի կերպով ա-
ւելի ծանր պիտի ըլլայ:

Մինչ եթէ տասնեակ տարիներ
առաջ Հայոց համեստ պահանջում-
ներուն գոհացում տրուէր ու եր-
կին բարեկարգութիւնը ապահո-
վուէր, նոյն երկաթուղիները եր-
կին ու պետութեան աւելի օգ-
տակար կերպով շինող տեղական
ընկերութիւններ կազմուած ու
մինչեւ հիմա գործը գլուխ հա-
նած պիտի ըլլային: Ահա ինչ
կարծէ իր երկիրը չբարեկարգելու
համար իւր հպատակները կոտո-
րել տուող վեհապետի մը սխալը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարիկ, 5 մարտ
ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ ԴԵՊՈԶԻՏԵՐԸ
Եօթանասուն եւ հինգ ամերիկա-
ցի երեսփոխաններ, որոց ամէնքն ալ
ռամկավարական կուսակցութեան
կը պատկանին, շնորհաւորութեան
առաջարկ մը քուէարկած են Կրօն-
ժէ զօրաւորին անոր սքանչելի դի-
մադրութեանը համար:

Իտալիոյ մէջ ծայրագոյն ձախա-
կողմեան երեսփոխանները օրակարգ
մը քուէարկած են այսպէս: «Գլխա-
յող Պօէր ժողովրդին՝ հերոսական
արժանեաց վրայ, որ կը կռուի իր
ազատութեան եւ անկախութեան
համար:» Այս երեսփոխանները պի-

տի ջանան որ իտալիոյ կառավա-
րութիւնը միջամտէ, երկու մարտիկ
ազգերու մէջ խաղաղութեան դա-
շինք մը հաստատելու համար:

Իտալիոյ մէջ օրէ օր աւելի Անգ-
ղիոյ դէմ կը դառնայ հասարակաց
կարծիքը: Անգղիական կառավա-
րութիւնը նոր հրովարտակով մը՝
Մալթա կղզւոյն մէջ իտալերէն լե-
ուին գործածութիւնը արգելելով,
«Մ'եսաժրո» թերթը հետեւեալ
կերպով կը խօսի այդ մասին: «Ֆր-
անսա՝ զոր ոմանք մեզ կը ներկա-
յացնեն իբրեւ մեր զխաւոր հա-
կառակորդն Միջերկրականի մէջ,
մեզ հետ աւելի լաւ կը վարուի,
մինչ մենք միշտ շահագործուած
ենք եղեր Անգղիացիներէն: Մենք
կը կարծենք թէ լաւ ժամանակն
է՝ նոր ուղղութիւն մը առաւել մեր
Միջերկրանի մէջ բռնելիք ուղղու-
թեան:»

Գերման խօսարարն մէջ ըն-
կերվարականները կառավարութե-
նէն հաշիւ են պահանջած խաղա-
ղութեան ժողովին մէջ անոր կա-
տարած դերին վրայ: Վիճարա-
նութեան ժամանակ ատենաբան
ները խստօրէն յարձակած են
Անգղիոյ եւ ի մասնաւորի Սըսիչ
Ռօտի վրայ: Պ. Պէպէլ իր հա-
մակրութիւնն այստեց Պօէրնե-
րու համար, յայտարարելով միան-
գամայն թէ ինք Անգղիոյ հակա-
ռակ չէ (անկոֆօպ):

Թրանսիլի համար կազմուած
ֆրանսական յանձնախումբը, որուն
կեդրոնը Բարիկ է, կը շարունա-
կէ բանախօսութիւններ ընել,
դրամ հաւաքել եւ կամաւորներուն
պէտք եղած միջոցները տալ Թը-
րանսիլի մեկնելու: Այդ յանձնա-
խումբին մը մասնակցին արդէն
բաւական թուով քաղաքական
անձնաւորութիւններ՝ երեսփոխան,
ծերակուտական:

Վերջապէս, իբրեւ յետին նշան
համակրութեան Օրանժի եւ Թը-
րանսիլի մէջ պատերազմողներու,
ըսենք թէ Բարիկի մէջ զօրավար
Կրօնժէի նուիրելիք պատուոյ սու-
րին համար, մինչեւ օրս հաւա-
քուած է 4000 ֆրանք:

ՈՐԶԱՓ ՄԱՐՏ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՆ ԱՆԳԼԻԱՅԻՐ
Շատ մը հաշիւներ ներկայաց-
ուած են Անգլիոյ կորուստներուն

վրայ, բայց հետեւեալը մեզ աւելի ճիշդ կերեւայ, եթէ ինկատի առնուին Անգլիոյ ունեցած կորուստները կը տեսնուի թէ Պօէրներու դիրքը Լոնտոնի մէջ կարծուածին չափ գէշ չէ:

Պիւլլըր 7,000 հոգի կորսնցուց շէտիսթի շուրջը. Ուայթի 15 հազար զօրքերէն մնացածները անկարող են պատերազմելու, վասնզի յոգնած և տկարացած են պաշարման ժամանակ կրած նեղութիւններէն: Ենթադրելով որ ասոնցմէ 3000 կարենան քալել—ինչ որ հաւանական չթուիր մեզ—պատերազմը դարձեալ արժած պիտի լինի՝ 20,000 մարդ: Այս թիւին վրայ աւելցնելու է կէօն-գօէի և Տիւնտէնի 6000ը, ուստի հաւասար է 26000:

Եթէ ասոնց վրայ աւելցնենք Մէթուէնի գնդէն 4000, Ֆրէնչի հին գնդէն 3000, Լորտ Ռօպերթսի գնդէն 3000, ընդամենը կընէ 36,000 մարդու կորուստ:

Ճշմարտութենէն բնաւ հեռի չենք լինիր եթէ 4000 հոգի հիւանդ հաշուենք այլ եւ այլ հիւանդանոցներու մէջ և այսպէսով կունենանք 40000 կորուստ, այսինքն Անգլիական Հարաւ Ափրիկէի մէջ ունեցած բոլոր զօրքերուն մէջ քառորդը:

Պէտք է յիշել թէ այս թիւերը չափազանցութիւններէ հեռի են, վասնզի նոյն իսկ Անգլիացիք զայնքս կընդունին:

Ուրեմն այժմ Լորտ Ռօպերթսի հրամանատարութեան տակ կը գրտնուին ոչ թէ 160-170000 մարդ, այլ միայն 120000:

Իրաւ է թէ այս զօրքերուն վրայ նորեր պիտի աւելնան, բայց Պօէրները կարող կերեւան անոնց դիմադրելու, մանաւանդ որ հիմա պաշտպանողական դիրք մը պիտի պահեն:

Պ ՏԵՄԱՆԷԼ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՈՒՄԸ

Պի փօլ Տէշանէլ Սենեկի նախագահին քաղաքական դիրքը ամեն օր կը մեծնայ, ուրեմն անոր հրապարակաւ ըսած խօսքերուն մասնաւոր ուշադրութիւն մը դարձնելու է:

Հացկերոյթի մը ժամանակ ի նօժան լը Ռօթրու, ճառ մը խօսած է, որուն քաղաքական մասին վրայ մենք կանգ չենք առնուր, բայց ուր բաւական կարեւոր բաներ հաստատեց, որոց կարեւորութիւնը այնքան մեծ է որքան խօսողին մէն մի բառերը չափուած ու կշռուած են: Ահա թէ ինչ ըսաւ Ֆրանսայի զինուորական մասին:

«Մենք Եւրոպայի առաջին թընդանօթն ունինք, քանի մը ամիսէն—ինչպէս կըսէր ֆրանցիսները պատերազմի մինիստրը—ամենալաւ հրացանը պիտի սնենանք: Մեր պաշտպանողական գծերը

1886էն ի վեր բարեփոխուած են: Մենք մեծ և զօրաւոր զանազանութիւն մը ունինք որ մեզ ունէ յարձակումէ զերծ կը պահէ:

Մեզ ինչ պէտք է ուրեմն յուսալու և հաւատալու:»

Ս. Դ.

Մարտի, 3 մարտ

Ստորագրեալ՝ Ամերիկա երթալու համար ի Մարսէյլ քիչ մը ժամանակ կենալու ստիպուած ըլլալով, քաղաքիս Ընթերցարանի Ընկերութեան կողմէ հրատարակուած հրաւիրագրէ մը կիմանամ թէ հինգշաբթի դիշեր 1 մարտի Ս. Վարդանանց հանդէս մը պիտի կատարուէր ի Սալօն Բէն. Ազգային պարտականութիւն մը կատարած ըլլալու զգացմամբ՝ իբր հայ, փութացի երթալ հոն: Սակայն ցաւ է ինձ ըսել, թէ ներկայ գտնուող զգացալիքս պատրանք կրած եղանք, չը տեսնելով Ազգային հանդէսի մը զուտ հայկական հանգամանքը:

Հանդէսին նախագահ Եւրոպոյ առաջնորդ Սրբազանին հակիրճ խօսքերէն յետոյ, որ կարծես չէր ուզեր ընդլայնել իր նիւթը, զգալով անշուշտ թէ իր խօսքեր Ձայն բարձրացոյց յանապա՛ս պիտի ըլլային զրօսասէր միջավայրի մը մէջ. արտասանուեցան երկու ճառեր, երկու բանաստեղծութիւններ, նաեւ երգուեցան Բամբ Որոտան մը, Տաւրոսիկ եւ Հնչակեան երգ մը (նօթեն):

Հանդէսին այս առաջին մասէն յետոյ, կըսկէր նախագահողէն, որ պիտի գրաւէր երեկոյթին ամենամեծ մասը, կը խոստովանիմ, թէ իբր Եւրոպացուց զօրանքի համար կազմակերպուած հանդէս՝ դո՛ւրստից չէր, եւ արդարեւ ծախք եւ ջանք չէր խնայուած ասոր համար. միայն թէ այսչափ աշխատութենէ եւ ծախքերէ յետոյ, ինչ դրամական արդիւնք ունեցաւ այս առթիւ եղած հանգանակութիւնը, չեմ գիտեր, բայց լաւ գիտեմ որ ասնթիւմ չյատկացուեցաւ Որբախնամ գործին կամ Հայաստանի սովելոց, ինչպէս սովոր են ընել Ամերիկա կամ ուրիշ տեղեր հաստատուած դպրոցականութիւնը, նմանօրինակ առիթներու մէջ, օտարազգի հրաւիրելոց առիթէ պարզելով մեր Հայրենեաց թշուառ վիճակը եւ նոցա նպաստը խնդրելով, յօգուտ մեր խեղճուկ որբերուն եւ սովատանջ եղբարց Բայց եւ ալ կեցեր ինչ կըսեմ:

Ներքեցէ՛ք ո՛ր պատուական Մարսէյլցիք, պարգամտութեան արդիւնքն է այդ, ինչ ընեմ, հայրենի դաւառէս նոր կուգամ, քաղաքակրթութեան նրբութեանց ճաշակը չունիմ դեռ դուք իրաւունք ունիք, հաճելի զօրանքներով ոգեւորեալ հանդիսատեսներու սիրտերը վրդովելու, ոչ կենցաղագիտական փափկանկատութեան հակառակ է. բայց եթէ մեր ազգի ներկայ վիճակը ձեր ուշադրութիւնը հրաւիրելու արժանի չէք համարել, գոնէ ձեր հրաւիրած օտարներուն բացառելու պարտաւոր չէի՛ք զգար զձեզ, թէ ինչո՞ւ էր այս հանդէս ինչ է այս օտնին նշանակութիւն, ո՞վ էր Վարդան եւ ինչ իր գործ, թէ որչափ սիրելի են մեզ, Հայ եկեղեցւոյ եւ Հայ ազգայնութեան համար իրենց արեւը չխնայող այս Սուրբ եւ քաջ զիւցազուներն, բայց ոչ դարձեալ դուք իրաւունք ունիք, աշխարհաքաղաքացի չըլնալու մը մէջ՝ Ազգութեան եւ կենցաղային խօսք չըլլար, անքաղաքավարութիւն է, յետադիմութիւն է, եւ կը նախընտրէ քաղաքավարի, յառաջդիմասէր երեւալով հաճելի ըլլալ, քան թէ միտքերնիդ բերել թէ ազգին այս ճգնաժամին մէջ՝ գոյութեան կոխը մը դնելու համար եղած ամեն ձեռնարկ ուրիշ նկատողութիւններ մոռցնել տալու են:

մեզ: Նախագահողէն յաջորդեց պարահանդէսը, Հայ գեղեցիկ հեռը չմանակցեցաւ պարերուն, այլ միայն Հայ երիտասարդներ նազելաչուք ծրարեցան հինքու հետ պարեցին ոգեւորութեամբ: Սոսքս Ձեզի կուղղեմ, Հայ երիտասարդութիւն Մարսէյլ: Չպիտի մեղադրեմ զձեզ թէ պարեցիք, եւ ալ երիտարդ եմ, եւ ծանօթ պարին զգլխիչ հրապարակներուն, մանաւանդ ծրարեցան հեռը՝ այսինքն ինչէ զուարթ եւ հաճոյասէր պարուհիներու հետ, բայց իմ սիրելի հայրենակիցք, նախագահողէնի ժամանակ՝ նկատեցի՞ք արդեօք թէ պահ մը առաջ Ձեր երգած ազգային երգերուն եւ ծրարեցի՞նք ներքին մէջ՝ անբաղդատելի տարբերութիւն մը կար՛հարեկամ երիտասարդութիւն Մարսէյլի, գերազանցապէս գեղարուեստասէր միջավայրի մը մէջ կապրիք, պարին չափ եւ անկից աւելի. Երաժշտութիւնն սիրեցէ՛ք, որպէսդ իւրիշ առթիւ՝ եթէ հայ անուներ մաք, այնօրինակ միջազգային տօնի մը, հայ երաժշտութեան անպատարեր երգեցողութիւնք վերջ գտնեն, հաւատացէ՛ք ի վերջոյ դուք ալ գոհ պիտի մնաք պարտաւոր ժամերնեղ մաս մը, երաժշտութեան պէս ազնիւ զրօսանքի մը նուիրելով: Նիդ, որով օտարին առջեւ ալ երաժշտութեան ճաշակէ զուրկ ցոյց չէք տար Հայը:

Վերջապէս մեր բաժնուած միջոցին՝ տոնուր տպաւորութեան տակ մեկնեցանք սոյն հանդէսէն, ուր կարծես թէ ամեն ջանք ի գործ դրուած էր՝ ժողովուրդը քայլ մը եւս օտարութեան մօտեցնելու. քան ազգային հանդէսի մը ոգեւորիչ կրակով զանոնք վառելու: Բայց թեհեւս առարկուի թէ, տեղացի չեղող մը՝ ինչ իրաւունք ունի, այսչափ խիստ քննադատութիւն մը ընելու: չըմեղանքս Ձեր եւ իմ, մի եւ նոյն տարաբաղդ նկրդին զաւակները ըլլալն է. եւ յետոյ, յոյս ունիմ որ օգտակար կ'ըլլայ այս հրատարակութիւնն նոյն երեկոյ հանդէսի գաղարի պահունք եւ անկէք վերջը՝ Մարսէյլաբնակ Ազգայնոց մէկ մասին կարծիքն է, ինչ որ վերը գրեցի, երեք տարիէ ի վեր՝ մի եւ նոյն ձեւով կը տօնուի եղբր վարդանանց հանդէսը, եւ ուղղուած դիտողութեանց կը պատասխանուի եղբր թէ, ինչ ընենք, ժողովուրդը ուրիշ կերպով դրամ չտար, որով Ընթերցարանի ընկերութիւնն ալ իւր հասոյթէն կը զրկուի: Ուղեցինք Ընթերցարանն ալ տեսնել, եւ իմացանք թէ՛ երեք տարուան հանդէսներէ եւ բաժանորդագրութիւններէ գոյացած հասոյթով՝ երեք չորս ամսոյ չափ կեանք մը ունենալէ յետոյ, ընթերցարանը ի քուն մտած է, եւ ունեցած գրքերը խաղաղիկ կը ննջեն սնտուկներու մէջ, ընթերցողին մասններուն հպումէն զերծ ու ապահով եւ ահաւասիկ բուն նըպատակը, ներկայս Ձերազգոգու թերթին մէջ հրատարակութեան տալու, ուղեցի սոյն տողերով՝ ուժ տալ Մարսէյլի երիտասարդութեան այն մասին, որ թէեւ փոքրած թիւ, այլ եռանդուն կերպիւ փարած կ'երեւան իրենց նպատակին, որ է, Ընթերցարանն անուշով կեցողուն մը ստեղծել, եւ ատով փրկել, գինետուններու, խաղարաններու, եւ այլ այս կարգի զրօսանքներու հետամտող երիտասարդները չայդ կեցողներն մէջ հաւաքելու, ընթերցանութեամբ, լսարանով երաժշտութեամբ, եւ զանազան հաճոյալի (բայց չինչ) ժամանցներով օգտակար ընել նոցա պարտաւոր ժամերը:

Ձերմապէս կը փափագիմք, որ յաջողին այն երիտասարդք, իրենց ազգօգուտ նպատակը իրագործելու, եւ իրենց ձեռնարկին խոչնդոտ եղող, աշխատանքներու եւ հաճոյամոլներու դաւերը ի դերեւ հանելու:

Առաւմաջի

Գ. ՖՐԱՆՍԱ

(Շարունակ. նախորդ թուէն)
Նաբոլէոն Գ.ի կայսրութիւնը նորէն եկան հաստատուելու այն կարգ մը օրէնքները ու սովորութիւնները, որոնց բարձմանը համար անչափ արիւն թափեր էր Գաղիացին, և անոնց նորէն հաստատուելուն համար ալ կը զոհուէր արիւնալից յեղափոխութեան շարքերով:

Բաւական տանելի Սահմանադրական թագաւորութիւն մը կործանեցին ազատութիւն գտնելու համար, և երկրորդ անգամ ըլլալով անտանելի բռնապետութիւն մը ստեղծեցին:

Երկրորդ կայսրութիւնը թէպէտեւ արտաքին փայլ և շքեղութիւն մը բերաւ իր հետը բայց միեւնոյն ատեն ներքին կաշկանդումներ ալ աւելի շեշտուեցան և հաջորդ ծախքերու դուռ մը բացին ազգին համար, որուն ծոցին մէջ իր զաւակներէն հազարաւորներ անօթի էին:

Նաբոլէոն Գ. կայսր հռչակուելով ճոխ արքունիք մը կազմեց, որուն առաջին անգը բռնեցին Պօնաբաւթ ընտանիքին անդամները, և յետոյ կայսեր քաղաքային ու զինուորական տունները որ կը բաղկանար ատենին էն փայլուն զինուորականներէն և պետական անձներէն:

Կայսրը ամուրի էր. որչեց տ. մուսնանալ հարազատ ժառանգով մը իր յաջորդութիւնը ապահովելու համար: Բայց խնամութեան համար եղած առաջարկները ոչ միայն արքունիքներէ ալ իշխանական գերդաստաններէ ալ մերժուեցան. ուստի Նաբոլէոն Գ. որոշեց իրեն կենակից ընտրել Մօնթիյո կոմսին (որ Սպանիացի ամենէն հին ազնուականներէն էր) աղջիկը Լիօնէն:

Բայց այս ընտրութիւնը բաւական դժգոհութիւն պատճառեց Գաղիացի շրջանակներու մէջ, որոնք կայսեր օտար արքունիքներէ կրած մերժումին վրայ կը յուսային որ Գաղիացի աղջիկ մը պիտի ընտրէ:

Նաբոլէոն Գ. կայսեր և Լիօնէնի ամուսնութենէն արու զաւակ մը ծնաւ, որուն կնքահայրը եղաւ Հոմի Պապը, իսկ կնքամայրը Շուէտի թագուհին և նորածին իշխանը Ժան-Ժօզէֆ-Նաբոլէոն անունը առնելով կայսրութեան թագաժառանգ հռչակուեցաւ:

Երկրորդ կայսրութեան հաստատմամբ երկրին օրէնքները բաւական փոփոխութիւններ կրեցին, տպագրական օրէնքը սահմանափակուեցաւ, գրեւոր, խօսելու ազատութիւնը վերցուեցաւ և խիստ պատիժներ սահմանուեցան կառաւարտներէն:

վարութեան դէմ գրգռելներուն ըլ-
լայ թէ խօսքով թէ գրով: Այս
օրէնքներուն խտուրտները անհա-
մեմատ սուր կերպարանք մը ա-
ռաւ մանաւանդ այն ատեն երբ
կայսեր և կայսրուհւոյն կեանքին
դէմ մէկ քանի դաւադրութիւն-
ներ սարքուեցան. և այս
պատճառաւ բազմաթիւ թէ յանցա-
ւոր և թէ անմեղ անձեր բանտար
կուեցան և աքսորուեցան: Այս
ընդհանուր հալածանքին մէջ չը
մոռացուեցան հակապօնաբառութե-
անք և հանրապետականք որոնք
սակայն դաւադրութեանց մասնա-
կից չէին:

Դրամական տաղանակը երթալով
կը սաստկանար բազմաժախս կայ-
րութեան պատճառաւ. երկրին
հասոյթներուն մեծ մասը գրեթէ
գործածուեցան այնպիսի նպատակ-
ներու որոնք կայսեր փառքին և
զիսաւոր քաղաքները միայն զար-
դարելու ծառայեցին, ինչ որ մեծ
բարիք մը չէր կրնար արտադրել
օրուան խեղճութիւնը ամօքելու
համար:

Բարիք-Լիոն-Մարսէյլ քաղաք-
ները զարդարուեցան ամէն կերպով
մանաւանդ Բարիքը աշխարհի հա-
մար զուարճութեան կեդրոն մը
դարձաւ:

Նաբօլէոն Գ. ի նախաձեռնու-
թեամբ Բարիքի մէջ արուեստա-
հանգէս մը կազմակերպուեցաւ և
այս առթիւ բազմաթիւ իշխաններ
այցելեցին Բարիքը. որոնց մէջ կը
գտնուէր Անգլիոյ Վիգթորիա թա-
գուհին և իր ամուսինը Ալպէրթ
իշխանը. ու այսպիսով փոխա-
գարձ այցելութիւն մ'ալ տուած
կըլլային Նաբօլէոն Գ. ի որ փու-
թացած էր Լօնտրա այցելել նա-
խագէս:

Նաբօլէոն Գ. ի իշխանութեան
օրով Ֆրանսայի մայրաքաղաքը այ-

ցելող օտար վեհապետներուն մէջ
կը տեսնուի Սուլթան Ազիզ կայս-
րը իր հետ ունենալով Մուրատ և
համիտ եղբորորդիները, առաջին
անգամ ըլլալով Օսմանի ցեղէն վե-
հապետ մը կայսրէր Եւրոպական
մայրաքաղաք մը, որուն փոխադարձ
այցելութիւնները Էօթէնի կայսրու-
հին տուաւ:

Երկրորդ կայսրութեան ներքին
քաղաքականութիւններէն մին ալ
եղաւ եկեղեցական վէճերը միշտ
վառ պահել կղերական զօրաւոր
տարրը զբաղեցնելու համար:

Գալով Նաբօլէոն Գ. ի իշխանու-
թեան արտաքին գործունէութեանը
անոնք ալ ոչ նուազ կարեւոր
պատահարներ են:

Խորմի ծանօթ պատերազմին,
որ Գաղղիա ալ իր կարգին մաս-
նակցած էր, ինչպէս գիտենք վերջ
տրուած է Բարիքի դաշնագրով,
որով Ռուսիոյ դարեւոր քաղաքա-
կանութիւնը մեծ հարուած մը ըս-
տանալով և Նաբօլէոն Գ. Եւրոպայի
վարիչը կը դառնար, բայց տեւական
չը պիտի ըլլար այդ գերակշիռ
դիրքը իրեն համար: Ռուսիա ան-
շուշտ պատեհ առիթ չը պիտի կոր-
սընցնէր հակահարուածը տալու:

Երկրորդ կայսրութեան օրով
Գաղղիա մասնակցեցաւ Անգլիոյ
Չինաստանի դէմ մղած կռիւին,
որուն շնորհիւ Չին կայսրութեան
մէկ քանի նաւահանգիստները բաց-
ուեցան Եւրոպայի առաջ, և Գաղ-
ղիայ Քօչինչինէն (Հնդկաչինաս-
տան) կարեւոր մաս մ'ալ գրաւեց
այն ատենը:

Նաբօլէոն Գ. ի վարչութիւնը
չատ տխուր դեր մ'ալ ունեցած
է Մէքսիկայի պատերազմին մէջ.
կայսեր մեքսիկականութիւնը մեծ դեր
կատարեցին Մէքսիկայի հանրա-
պետութեան կործանմանը համար:
Մէքսիքան՝ Գաղղիական բանակէն
զըւառուելով հոն կայսրութիւն մը
հաստատուեցաւ. Ալստրիոյ արդի
կայսեր եղբայր Մաքսիմիլիէն ար-
չի-գրքսին իշխանութեան տակ. որ

այնչափ տխուր վերջաւորութիւն
մը ունեցած է:

Նշանաւոր երկրաչափ Ֆերտի-
նանտ տը Լէսսէքսի շնորհիւ պեղ-
ուած Սուէզի ջրանցքին բացումն
ալ երկրորդ կայսրութեան օրերուն
կը հանդիպի. ջրանցքին բացումին
ներկայ գտնուած է Էօթէնի կայս-
րուհին:

Նաբօլէոն Գ. օգնած է նաեւ
Վիկթոր-Էմմանուէլի իտալիոյ մի-
ացումին համար մղուած կռիւին
ատենը:

Երկրորդ կայսրութեան վերջ կղնէ
Ֆրանքօ-Պրմանական պատերազմը
որ Սպանիոյ գահուն շուրջը ծա-
գում առած խնդրի մը արդիւնքն
է առերևոյթապէս, բայց ներքնա-
պէս Գերմանիոյ և ի մասնաւորի
Պրիվարք իշխանի մէկ խաղն էր
Ֆրանսան զարնելու. և Միքս Նա-
բօլէոնի Բուրբուոյ տուած հար-
ուածին փոխարէնը տալու համար:
Այս պատերազմին մէջ Գաղղիա-
ցիք յաղթուեցան. և կայսրը գե-
րի ինկաւ Բուրբուոյ ձեռքը. ո-
րոնք մինչև Բարիք մտան:

Ալգաս-Լօնէն Գերմանիոյ անցաւ.
գաղղիացիք երեք օրուան մէջ վը-
ճարեցին յաղթական ազգին պա-
հանչած պատերազմական տուգան-
քը, այս առթիւ Գաղղիացւոց ցոյց
տուած հայրենասիրութիւնը ու ար-
ժանապատուութիւնը հիանալի էր:
Ժողովուրդին եղած մէկ կոչումին
վրայ ամեն դասակարգ, ամէն տա-
րիք, այր և կին, յօժարակամ մաս-
նակցեցան տուգանքին վճարման
իրենց գոհարեղէնները ու թանկա-
զին առարկաները վարչութեան
տրամադրութեանը ներքեւ դը-
նելով:

Ֆրանսական Առեանը Նաբօլէոն
Գ. ը գահնկեց հռչակեց. կայսրը
ընտանեօք Անգլիա քաշուեցաւ.
ուր վերջացուց իր յարափոփոխ և
տեսակ մը բազմախնդիր կեանքը:
Նաբօլէոնի հետ կայսրութիւնն
ալ ինկաւ և երրորդ անգամ ըլլա-
լով հանրապետութիւն հռչակուե-
ցաւ:

Երկրորդ կայսրութիւնը որ այն-
չափ մեծ չքով և աղմուկով ծը-
նունդ առեր էր. նոյնչափ ալ մեծ
դժբաղդով փլաւ. իր անկումովը
ինչպէս Գաղղիոյ նոյնպէս ալ ամ-
բողջ Եւրոպայի ճակատագիրը կը
փոխուէր: Ֆրանսական կայսրու-
թեան կը յաջորդէր Գերմանական
կայսրութիւնը. այս պատմական փո-
փոխութիւնները ահագին յեղաշը-
շում մը առաջ բերին քաղաքակիրթ
աշխարհի և ազգերու ճակատագ-
րին վրայ:

Ս.

Շարունակելի)

ԼՐԱՔԱՂ

Պատրիարքարանէն մասնաւոր
գրութիւնով մը հրահանգներ տը-
րուած է կարինի առաջնորդա-
կան տեղապահ Զաւէն վարդապե-
տին, որպէսզի այդ գաւառին մէջ
առաջ եկած կրօնափոխութեան հո-
սանքին առաջը առնել աշխատի
չըլահայեցութեամբ:

— Ռուսահայ ծանօթ բարերար
Պ. Գրիգոր Զանչեանց, որ իր
անձնական ծախքովը 8 որբանոց
կը պահէ, այս անգամ 2500 բուր-
լի զրկած է Պատրիարքարան 9
բդ. որբանոցի մը բացման համար:

— Պուրկաղի թաղական խոր-
հուրդը Պատրիարքարան դիմում
մը ընելով խնդրած է որ հարկ ե-
ղած դիմումները ըլլան Պուրկաղի
մէջ հացակարօտ 7-800 ազգայնոց
իրենց ծննդավայրը դառնալու հա-
մար: Պատրիարքարանը խոստա-
ցած է ընդ փոյթ հարկ եղած դի-
մումները ընելու այդ խեղճերուն
վերադարձին համար, որոնց օրա-
կան հացը տեղւոյն աղքատախնա-
մէն կը հոգացուի ամեն օր:

— Անահիտի տնօրէն խմբագիր
Պ. Արշակ Զօպանեան, ժողովըր-
դական աւանդութեանց 1900ի տի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՕԵՐԸ

Ան պատահարները որոց թատրը ե-
ղաւ Թոնապալալ, իր բնակիչներուն
աղղու ընդդիմադրութիւնը, իրենց
քաղաքապետութիւնը, իրենց հաստատա-
մութիւնը Պօէրներուն անանկ կա-
րեւորութիւն մը տուած են որ, աս
փոքրիկ ժողովուրդին հետ կապ ունե-
ցող ամեն բան չահեկան կերեւայ:
Թոնապալալի բարքերուն շատ ի-
րազեկ Բրէթորիացի վաճառական մը,
Պօէրներու ներքին կենցաղավարու-
թեան վրայօք յոյժ հետաքրքրական
մանրամասնութիւններ զրկած է մեզի.
զոր հրատարակելով ինքզինքնիս եր-
ջանիկ կըզգանք կըաէ Կոյուա:
Թոնապալալ միջին հաշուով 7-8000
տարածութեամբ՝ հաւասար մասերու
բաժնուած է: Իւրաքանչիւր մաս եր-
կու որոշ բաժանումներ ունի. մին՝
վարձակալը կը մշակէ հոն հասցնելով
հասարակ ցորենական արմոխքը. միւ-
րը՝ բուժումի յատկացուած է: Այս վեր-
ջնոյն մէջ է որ կարածին առջառաց
վառաւոր հօտերը, Գոմաուկի մէջ տես-

նուածներուն յար եւ նման, նոյնպէս
բունները որ արթնութեան կը միա-
ցնեն զժուարանեմանիլութիւնը:

Բնիկը իր տունը կը չինէ գետակի
մը եզրը, չըջապատուած ծառի ձողի-
քով, ուր էօքալիթիւսը և միմօղան
կը վխտան՝ բնակարանը ամենազեղա-
ծիծաղ առարան մը կը ներկայացնէ:

Այցելուն զայն չըջած ատեն կը զար-
նուի անոր խտամբեր նկարագրին:

Արդարեւ պիտեմքը կատարելապէս
կը պակսի- հոն գտնուածը կը կազմեն
գործաւորական կեանքի անհրաժեշտ
եղած գործիները միայն:

• • •

Պօէրին ամենէն աւելի հաշակած սը-
նունդը Պիլքոնկն է, կամ արեւու եւ
կամ շուքի մէջ չորցած միսը: Զանի կը
պատրաստեն, հասարակ ժամանակ, մաս
մաս կտրելով եւ բացօդայ տեղեր տա-
րածելով: Միսը գաւազանիկներու վը-
րայ կը գետեղեն և Էր կոմաց կամաց կը
չորնայ մինչեւ որ փայտ կտրի: Երբ
ուտել ուզեն տաշեղի պէս կը մանրեն:
Աս բեկորները երբ բերան առնուին.
միսին իր մէջ պահած սննդական հիւ-
թը թող կուտան:

Պիլքոնկը յոյժ ախորժաւմ է. ան-

բազմաթիւ կերպով քաղցրաբոյր եւ
բուր Եւրոպացւոց ըսածին նայելով
կը գերազանցէ լիւնի երչիկը:

Բնակութեանց իրարմէ ունեցած հե-
ռաւորութիւնը, հաղորդակցութեան մի-
ջոցներու դժուարութիւնը, և մանա-
ւանդ աս ժողովուրդին ապրելու եղա-
նակը բազմակուտակութեան արգելք
են: Իրարմէ կղզիացած ապրելով այս
երկրագործները իրենց սէրը զիրենք
չըլկապատողներուն տուած են:

Ընտիր ընտանիքի մը հայր եղող Պօ-
էրը անհուն ուրախութիւն կը զգայ
իր բազմաթիւ զաւակաց մէջ ապրե-
լու:

Նորածնի մը աշխարհ գալը մտերմա-
կան հաւաքումներով, ազգականներու
եւ զրացիներու սրտոտ բարեմաղթու-
թիւններով կողջուեցի: Տղու մը ծը-
նունդը ոչ մէկ բարքութիւն չը ներ-
կայացնէր: Այս կոյս երկրին մէջ, բը-
ժիչի եւ մանկաբարձ գրեթէ անծանօթ
են: Տղաբերը ծանր եղաւ մի, դրա-
ցիները անմիջապէս հիւանդին սընարը
կը կանչուին: Իրեն անհրաժեշտ խը-
նակները կը տրուին, եւ ան ատեն
կեւլան կերթան երբ վտանգը անցած
է: Տղու մը ծնունդը փութկոտութիւն
պահանջներուն պէս, անոր տրուելիք
խնամքներն ալ շատ պէտք չեն ներ-

կայացներ: Տղան անձեւ կերպով չի-
նուած օրրանի մը մէջ խանձարուրած
կը դետեղեն, չորսէն երեք տարուան
երէց եղբոր մը պաշտպանութեան յանձ-
նելով զայն: Մայրը անոր կաթ տալու
եւ պզտիկ պահապանին կարողութենէն
վեր եղած խնամքները տալու համար
կերթայ քովը:

Անդրանիկի մը վրայ է գործը. ան
ատեն ընտանիքին բարեկամ հաւատա-
րիմ չանը կիշնայ այս մատաղ կեան-
քին վրայ հսկելու պատիւը:

Երբ տղան քալելու սկսի, տան բո-
լորաթը կըզբօսնու: Այլապէս ալ ա-
բաղօրէն կը զարգանայ: Անանկ որ
տասը տարեկան եղած ատեն թերա-
վարժ եւ բոպացիին տասներէք տասնը-
չորս տարեկան կերեւայ:
Երբ բօնէյի մը կռնակը մագլցելու
կարող ըլլայ, մատաղ պօէրը իր առ-
պետական առաջին փորձերը կընէ:
Կենդանիին վրայ բարձրացած առանց
թամբի, երբեմն ալ առանց սանձի ա-
մենավտանգաւոր խոչնդոտներու զէմ
կը դնէ եւ այսպէս արժանաւոր հեծ-
նող մը կը դառնայ:

(Շարունակելի)

—(—)

եզերական համաժողովէն հրաւեր
ընդունած է մասնակցելու: Պ.
Չօպանեան այդ համաժողովի գու-
մարումներու մէջ բանախօսութիւն
մը պիտի ընէ Հայոց ժողովրդա-
կան աւանդութեանց, երգերու և
վէպերուն վրայ:

Պ. Չօպանեան այս առթիւ ա-
ռաջարկած է որ ցուցահանդէսին
համաժողովներուն մէջ հայկական
ցեղագրութեան, Հայոց հին կը-
րօնքին պատմութեան ալ տեղ մը
տրուի: Պ. Չօպանեանի այս ա-
ռաջարկութիւնները ընդունուած
են և համաժողովը որոշած է մաս-
նաւորապէս հրաւիրել Պ. Լալա-
յեանցը ու Հ. Տաշեանը ցեղագ-
րութեան և կրօնքներու պատմու-
թեան համաժողովներուն մասնակ-
ցելու համար:

—Պ. Է. Շահին հայ փորագ-
րիչ «Լօնտոնի արքայական փորա-
գրական ընկերութեան» անդամ ըն-
տրուել է: որուն փորագրական
գործերը Լոնտոնի Գեղարուեստե-
րու ընկերութեան սրահին մէջ մօ-
տերա պիտի ցուցադրուին:

—Ալեքսանտրիոյ հայ գաղթա-
կանութիւնը վաղամեծիկ հանրա-
ծանօթ Տիգրան Երկաթի յիշա-
տակին համար հոգեհանգիստ մը
կատարել տուած է քաղաքին հայ
Հռոմէական եկեղեցւոյն մէջ ուր
բացի հանգուցելոյն աղգականնե-
րէն ներկայ գտնուած են նաեւ
Ալեքսանտրիոյ Հայ-Լուսաւորչա-
կան և Հայ-Կաթողիկ հասարակու-
թիւններէն բաղմամբ անձեր:

—Հաւաստի աղբիւրներէ կ'իմա-
նանք թէ՛ Պ. քաղաքի մէջ մար-
տուած 28 սնտուկ գոյքերէն զատ
1200 ֆրանք արժող ճոխ դրօշակի
մը ոսկեզէն մասերը հալեցնելով
կըլլած են:

ԹԻՒՐԲԻԱ ՀԱՎԱՏԻՍԱԹԸ

Կապիտալիստները մուհաճիւր էր-
մէնիւրէին մէմլէքէթիւրինէ ափա-
թի մէմլէքէթիւրինէ վէ Անատոլիոնը
պազը մահալլէրինտէ չըմէնտըֆէր
եափմագ իշխն Ռուսիանըն իսթէ-
աիքի իսթիյաղարտան վէ Թէք-
լիֆ իսթիյի շարթլարտան տօլա-
յը Սթանպօլ Ռուս էլիսի իլէ
թիւրք հիւքիւմէթի պէյնիւտէ պիր
սօւլքլուգ հասըլ օլմուշ տըր: Մ.
Չէնօվիէֆ պուշըն իշխն Բէթերս-
պուրկտան եէնի թալիմաթ թալէպ
իսթիշ տիր:

Եըլտըզտա վէ թիւրք տայիրի-
լէրինտէ ֆէվքէլատէ րահաթսըզ-
լըգ հիւքմ իսթմէքտէ օլուպ պու մէ-
սէլէլէր իշխն Եըլտըզտա մուհիւմ
մէմլէքէթի վուգու պուլմագտա ի-
միշ:

—Անատոլիո մատէնլէրի իսթի-
յաղը պուշտան պէօլլէ եալընըզ Օս-
մանը թէպաասընա վէրիւմէսի հագ
գնտայ չըգան իրատէյէ քարըը Ս-
թանպօլ էմնէպի էլիլէրի թարաֆ-
տան Պապը Ալիյէ օլան շիքայէթ

իւզէրինէ հիւքիւմէթ մէզըիւր նի-
զամըն տիյիլիւմէսինէ մէյալ կէօ-
րիւնտիւղի իշիտիլմէքտէ տիր:

—Իշպու մարտըն նիհայէթինէ
տօղրու 6000 Եահուտի թիւրքիա-
յա հիւքէթ իշխն Ռօմանիատան
եօլա չըգաճագլար իմիշ: Պուշլար-
տան մատտա թէքրար Եաշտան
500 եահուտի ֆամիլիալարը թիւր-
քիյա հիւքէթի իշխն Պապը Ալի-
տէն միւսատտէ իսթէմիլլէր:

—Թիւրքիայա կիրէն էմնէպի
էմթապարընտան շիմտիյէ գատար
ալընան եիւզտէ սէքիզ կէօմիւրկ-
իշպու մարտըն իպթիտասընտան
իսթիպարէն եիւզտէ օնպիւրէ թահ-
վիլ օլունաճագ իմիշ:

ՄԻԹԵՆԵՎՎԻՅԷ

Ինկիլիզ օրտուսունըն, 1900-
1901 է գատար, պիւտմէսի
61,497,400 ինկիլիզ լիւրասը օլուպ
ուժուժ օրտուսունըն մըգտարը իսէ
430,000 քիշիտէն իպարէթ պու-
լունույօր:

—Տէպա կազէթասընըն Գահի-
րէտէն ալտըզը պիր թէլէկրաֆա
նագարէն, ինկիլիզլէր ալէհիւտէ
պուլունմագ թէօմէթի իլէ ին-
կիլիզ խարիճիէ նագըրընըն թալէ-
պի իւզէրինէ պէշ նէֆէր, Մըսըր
զապըթլարը թահիթ թէվէթիէ ա-
լընմըշլար: Պու մէսէլէ Մըսըրտա
էհալի պէյնիւտէ ֆէվքէլատէ հէ-
յէճանա մուճիպ օլմուշ տըր:

—Լօնտրատան վէրիլէն պիր թէ-
լէկրաֆա նագարէն Մ. Չէմպըր-
լէյն Եաթալա կիտէճէք իմիշ:

—Ռուս հիւքիւմէթի թարաֆ-
տան Աֆլանիստան իլէ պիր իսթ-
իսթիպագ հասըլ իսթմէք իշխն իւշ
տէֆա թէքլիֆ օլունմուշ իսէ տէ-
էմիր իւշ տէֆասընտատա Ռուսիա-
նըն պու թէքլիֆիւրի րէտտ իսթիշ
տիր:

—Ռուսիա ենիտէն Գուշքայա
50,000 ասկէր եօլլամըշ քի, պու-
նուն իլէ Աֆլան հուտուտընտա
Ռուսիանըն քուվլէի ասկէրիյէսի
90,000 քիշիյէ պալիլ օգմագտա
տըր:

—Բարիզին մէշհուր վէ ճէսիւմ
թէաթլօլարընտան թէատըր-Յը-
րանսէլտէն աթէշ գուհուր իտուպ
թէաթլօ քեամիլէն եանմըշ տըր:

—Բարիզտէ Եահուտիլէրէ գար-
չը ենիտէն պիր թագըմ նիւմայիշ-
լէրհաղըրանմագտա օլտուղընը հէօ
քիւմէթ թարաֆնտան խապէր ա-
ընարագ թէտապիր շէտիտէ էլէ
ալընմըշ տըր:

—Ինկիլիզ Լիպէրալ (աղատա-
կան) ֆըրգասըր րէիւրիլիւտէ պու-
լունան Լօրտ Ռօզպէրի իսթիֆա
իտուպ, անըն երիւն Սըր Հէնրի
Գըմբըլ Պէնէրման թային օլուն-
մուշ տըր:

—Գըպըրըզ ատասը էհալիսի օ-
րայա հիւքէթի իտէն Եահուտիլէրէ
գարչը շիքայէթտէ պուլունտըղըն
տան մահալի հէօքիւմէթ օ մուհա

ճիւրէրի գապուլ իսթմէյէճէկինի
ըէսմէն իւն իսթիշ տիր:

ՏԱՐԻԼԻՅԷ

Հէօքիւմէթը հաղըրէ ալէհիւտէ
Պուլկարիանըն պազը մահալլէրին-
տէ միթիլիլէր իհրա օլունտուղընը
իշիտիլմէքտէ տիր:

—Պուլկար հէօքիւմէթի Սօֆիա
տա պիր հարպիյէ մէքթէպի թէէս
սիս իսթմէք նիյէթիւտէ իմիշ:

—Նոլ-Վիէք կազէթանըն պէ-
յանընա նագարէն Սթամպուլօֆ վէ
Սթոյիլօֆ բարթիլէրին պիրլէշմէ-
սի իշխն խայը վագթտան պէրու
պու իքի բարթի րէիւլէրի պէյ-
նիւտէ օլան միւզաքեթաթ սէմէրէ-
սիլ գալուպ: իսթհատ միւմըլէն օ-
լամմըշ տըր:

—Սօֆիա էթարֆլարընտա պու-
լունան քէօլլէր: քէօլլիւլէրին զը-
րաթ պանգալարընա օլան պօրճ-
լարընը էօտէյէմէտիլլէրինտէն տօ-
լայը՝ քեամիլէն մէքթիւր պանգալա-
րա մալ օլմուշ իսէ տէ: քէօլլիւ է-
հալի հալա իշինէ վէ չալըշմայա
տէվսմ իսթմէքտէ իմիշ:

—Տուպիցատա Եահուտիլէրէ
գարչը պիր հարաքէթ վուգու պուլ-
մուշ իսէ տէ գապըթանըն միւտա-
խէլէսի իլէ մէնն օլունմուշ տըր:

—Կէշէնլէրտէ կիճէ վագթը պիր
գաշքիշի սիւսիլը օլարագ Շուկա
ճէպհանէսինին իւզէրինէ հիւքիւմ
իսթիլլէր: մէքթիւր ճէպհանէի եաղ-
մա իսթմէք իշխն ֆագաթ նէօպէթ-
ճի ասկէրլէրին միւտաֆիտասը իւ-
զէրինէ մուաֆիպ օլամմըշլար:

—Պուլկարիանըն միւսթագիլ
գրալիյէթ իւնն իտէճէկինէ տայիր
տէվէրան իտէն չայեալարը Սթանն-
—Պուշլար գաթիլէն եալանա չըգա-
րըյօր, Գէզա թանըն Սօֆիա
մուսալիլի մէքթիւր չայեալար թէք
զիպ իսթիշ տըր:

ՄՈՒՀԱՐԷՊԷ

Ճենէրալ Ռօպէրթսին օրտուսը
Պօնրլէր իլէ մարտ 7 տէ զայէթ
շէտիտ պիր մուհարէպէյէ թու-
թուլուպ անլէրի կէրի սիւրմէկէ
մուաֆիպ օլմուշ տըր: Պու մու-
հարէպէտէ Պօնրլէրին կէօսթէմիշ
օլտուղու շէճաթ ու գահրաման-
լըգ ուճ տէրէճէտէ օլտուղու Ռօ-
պէրթս տալի իսթիրաֆ իսթմէքլէ
պէրապէր, ինկիլիզ թոփլարընըն
զիյատէ գուվլէթի օլմասընտան
նաշի Պօնրլէր տայանմամըշլար:

Ռօպէրթսին պէյանընա կէօրէ,
Օրանթ վէ Թրանսպալ ճուհու-
րիյէթ րէիւլէրի տալի պու մու-
հարէպէտէ Պօնր օրտուսընտա հա-
ղըր պուլունըրլար իմիշ: Յագաթ
պուլարըն Պօնրլէրէ վէրաիկի ճէ-
սարէթ սէմէրէսիլ գալմըշ տըր:
Մարտ 9 թարիլի իլէ թայմըզա
պիլտիլիլիյօր քի Մարտ 7 մու-
հարէպէսինտէ Պօնրլէրին մաղու-
պիյէթի իլէ իսպաթ օլընտըթի
պուլար Լօրտ Ռօպրթսին հիւ-

ճիւմինէ գարչը գօյամայաճաղար
—Ինկիլիզ օրտուսու Օրանթ
փայթաթը իւզէրինէ տօղրու եիւ-
րիւմէկէ պաշլամըշ տըր: 7000
Պօնր մէքթիւր եօլու թուլմագտա
իմիլլէր:

Լօնտրատան վէրիլէն աիկէր պիր
թէլէկրաֆըն պէյանընա նագարէն
Մ. Գրիւկէր (Թրանսպալ ճուհու-
հուրիյէթ րէիսի) պիր իւննամէ
նէշրի իլէ ուժուժ Պօնրլէրի, կէճ
վէ իսթիյար: գատըն վէ շօնուք
սիւսալ ալթընա չաղըրմըշ տըր:

—Թրանսպալ կիրմէք թէքիւ-
պէսինտէ պուլունան պիր գօլ ին-
կիլիզ ասկէրի Պօնրլէրտէն կէթ
սիւրիւլիւպ Չուլուար էյալէթինէ,
Միլթօնա չէքիլմէյէ մէճպուր օ-
տուլար: Գէզա ինկիլիզլէր նա-
վալսթօնտան կէրի չէքիլմիլլէր:

—Օրանթ մէմալիլլէրտէ Պիլիլլէր
թապիր օլունան գալմ ինկիլիլլէ-
րէ իսթաթ կէօսթէմիլլէր, ին-
կիլիզ մէնպալարընտան վէրիլլէն
մալիւմաթ կէօրէ Օրանթ ճուհու-
հուրիյէթի րէիսի Մ. Շթանն
տալի պիր հաֆթա գարֆնտա ին-
կիլիզլէրէ իսթաթ իտէճէյի զանն
օլունմագտա տըր:

—Բրէթորիատան 9 մարտ թա-
րիլի իլէ Լօնտրայա վէրիլլէն պիր
թէլէկրաֆա նագարէն Տօրտընթէ
եաղըն մարտ 4 տէ վուգու պու-
լան մուհարէպէտէ ինկիլիլլէր պէ-
յիւք թէլէֆիյաթիլ կէրի սիւրիլլէ
միլլէր:

—Մէքթիլի մուհասէրէ իսթի-
Պօնրլէր շէհրին խարիճի իսթի-
քեամալարը քեամիլլէն թուլմուշլար
տըր:

ՄՐՏԱԹՈՒՆԴ

«Շալթու»ի պարտուան թիւը ա-
րօպէիս մեր ձեռք հասաւ: Այդ թիւը
թի խմբագիրը իբր թէ իմացած ըլլա-
որ արտամահմանեան մի քանի հայ թիւ-
թերու կողմէ Պ. քաղաքի մէջ կատար-
ուած 28 սնտուկի խաչագողութիւնը
քննող մասնախումբ մը կազմուած է:
Մենք այդ լուրին որ աստիճան ստա-
լինելը չէինք գիտեր: Բայց «Շալթու-
մի» «շնորհունակ» խմբագրին այդ տա-
թիւ հոս հոն ցայաեցուցած հայտնա-
թեանց լորցունքներէն կը հասկցուի
թէ՛ ուրիշներու կողմէ տեղւոյն վրայ
քննութիւն կատարելու լուրը իր օր-
տը թունդ հանած է, անշուշտ սա վա-
խով թէ մի գուցէ իր ոտքն ալ «Մա-
նօթ գործին» մէջ ընտելի:

ՆՈՐ

ԵՐԳԱՐԱՆ

ԿՍՄ

ՄՐՄՈՒՆՁ ՀԱՅՎԱԿԱՆ

Կը պարունակէ այսօր ժողո-
վուրդի ամեն դասակարգէ երգող
հին և նոր գրեթէ բոլոր երգերը:
Կը ծախուի իրԱՅԻՆԻՆԻ խմբու-
գրատոնը:

ԳԻՆ 1 ՅՐԱՆՔ

Отговорникъ Н. Драгулевъ
Варна, Печат. Н. Петровъ